# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Գավառ 26. սեպտեմբեր 2019թ

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Կարապետյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>> և <<Կամելիա-Արմ>> ՍՊԸ-ի դեմս տնօրեն Տ. Համբարձումյանի , այսուհետ <<Մատակարար>> , մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է իրացման համար Գնորդին մատակարարել տնտեսական ապրանքներ /համաձայն հավելված 1/, այսուհետ՝ «Ապրանք», իսկ «Գնորդը» պարտավորվում է ստանալ ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1. Մատակարարի կողմից ապրանքների մատակարարումը կատարվում է Գնորդի հասցեով:

2.2. Մատակարարման օր է համարվում «Գնորդ»-ին ապրանքի հանձնման օրը:

2.3. Ապրանքների մատակարարման համար Մատակարարը պարտավոր է ձևակերպել և Գնորդին հանձնել ապրանքագիր՝ նշելով «Ապրանքի» անվանումը, քանակը, միավորի գինը և գումարը:

2.4. Գնորդի կողմից խոտան հայտնաբերելու դեպքում Մատակարարը պարտավորվում է վերանորոգել կամ փոխարինել այն:

2.5. Ապրանքների ընդունումը, «Գնորդի» կողմից կատարվում է տվյալ ապրանքագրի ստորագրմամբ:

3. Հաշվարկների կարգը

3.1 Պայմանագրի գինը կազմում է 859500 /ութ հարյուր հիսունինն հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա

3.3. Գնորդի կողմից ապրանքի վճարումն իրականացվում է ապրանքի ստացումից հետո՝ 10 օրացուցային օրվա ընթացքում:

3.4. Ապրանքների գների փոփոխման դեպքում Մատակարարը կատարում է մատակարարվող ապրանքների բացթողնման գների վերահաշվարկ: Գնացուցակը Գնորդին է հաղորդվում նոր գներ սահմանելուց հետո՝ 5 օրվա ընթացքում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը և լուծարումը

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև «_20__»_12. 2019 թ.:

4.2. Պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծարման այն դեպքում, եթե կողմերից մեկը թույլ է տալիս դրա պայմանների կոպիտ և բազմակի խախտումներ: Պայմանագրի լուծարման նախաձեռնող կողմը պարտավոր է ոչ ուշ, քան լուծարումից 5 օր առաջ, գրավոր տեղեկացնել մյուս կողմին պայմանագրի լուծարման մասին:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Մատակարարված ապրանքի վճարման ուշացման դեպքում Գնորդը կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ ժամանակին չվճարված գումարի _____0.5_____ տոկոսի չափով:

5.2. Արտադրանքի չմատակարարման կամ թերամատակարարման դեպքում Մատակարարը վճարում է տույժ՝ չմատակարարված կամ թերամատակարարված ապրանքի արժեքի_____0.5_____ տոկոսի չափով, եթե նա այդ մասին սահմանված ժամկետում տեղյակ չի պահել «Գնորդին»: Տույժի վճարումը Մատակարարին չի ազատում պատվիրված ապրանքի մատակարարման պարտավորությունից:

6. Վեճերի քննության կարգը Սույն պայմանագրից մխող կամ դրա հետ կապված բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են մա- նակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում կողմերը դրանք հանձնում են դատարանի քննությանը:

Scanned by CamScanner

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդ- պիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պե- տական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտա- վորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1. Լրացուցիչ համաձայնությունները, ինչպես նաև սույն պայմանագրի ցանկացած փոփոխությունը և լրա- ցումները կատարվում են գրավոր և ստորագրվում կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:

8.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրա- վաբա- նական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| *« Վաճառող»*<br>*<< Կամելիա-Արմ>> ՍՊԸ*<br>*Ք. Գավառ Զ. Սայադյան*<br>*<<Այդի բանկ>> ՓԲԸ*<br>*ՀՎՀՀ 08417219*<br>*հ/հ 11806104182800*<br>*Տնօրեն՝ Տ Համբարձումյան*<br><br>(ստորագրություն) Կ.Տ | *« Գնորդ»*<br><<Գավառի ԲԿ>> ՓԲԸ<br>ք.Գավառ, Ազատության 21<br><<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ<br>Գեղարքունիք մ/ճ<br>Հ/Հ 22008514032900,ՀՎՀՀ 08417304<br>էլ.փոստ:gavaribk@mail.ru<br>վեբ կայք՝ www.gavarmc.com<br>Տնօրեն՝ Ա. Կարապետյան<br><br>ստորագրություն<br>Կ.Տ |

Scanned by CamScanner

Հավելված N 1
«26» 09 2019թ. կնքված
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հ/հ | Գնվելիք ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Անհրաժեշտ քանակը III, IV եռամսյակ | Միավորի գին | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | անկողնային սպիտակեղենի հավաքածու 39511120 | Անկողնային սպիտակեղենի հավաքածու վերմակի ծրարը շղթայով, նկարազարդ /վերմակի ծրարը 160x210սմ -1 հատ, սավան 160x210սմ - հատ, բարձի երես 50x70 սմ - 1 հատ, խտությունը 500գր/մ2 | կոմպ | 55 | 5000 | 275000 |
| 2 | երեսի սրբիչ 39514500 | 50x 90սմ, բամբակյա , խավոտ, միագույն կամ գծավոր, 500 գր/մ2 | հատ | 55 | 1500 | 82500 |
| 3 | սպունգ 39221490 | 90սմx5սմx 2մ | հատ | 5 | 7000 | 35000 |
| 4 | Վերմակ 39511100 սինդիպոնից | 100X210սմ | հատ | 20 | 5000 | 100000 |
| 5 | ծածկոց 19212600 | 160X210սմ | հատ | 10 | 10000 | 100000 |
| 6 | Բարձ 39141370 սինդիպոնից | 50X70սմ | հատ | 15 | 2000 | 30000 |
| 7 | Աթոռ 39111140 պլաստմասսայից | Երկաթյա ոտքերով, պլաստիկ հիմքով | հատ | 30 | 7900 | 237000 |
| Ընդամենը | | | | | | 859500 |

« Վաճառող»
<<Կամելիա-Արմ>> ՍՊԸ
Ք. Գավառ Զ. Սայադյան
<<Այդի բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 08417219
հ/հ 11806104182800
Տնօրեն Տ Համբարձումյան

(ստորագրություն) Կ.Տ

« Գնորդ»
<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ
ք.Գավառ, Ազատության 21
<<Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
Հ/Հ 22008514032900,ՀՎՀՀ 08417304
Էլ.փոստ gavaribk@mail.ru
վեբ կայք www.gavarmc.com
Տնօրեն Ա. Կարապետյան

ստորագրություն

Կ.Տ

Scanned by CamScanner